

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի առաջին կիսամյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2020 թվականին առաջին կիսամյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 6136 թղթակցություն, առաքվել՝ 3997 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Ազգային ժողովից՝ 15, ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 350, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 617, Հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 695, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 5, ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից՝ 1, հանրապետական գործադիր մարմիններ տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 1375, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 2104, գաղտնի թղթակցություն՝ 51, քաղաքացիներից՝ 922 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 246 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 6, Նախագահի աշխատակազմից՝ 1 ՀՀ, մարդու իրավունքների պաշտպանից՝ 4, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 185, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 31, հանրապետական գործադիր մարմիններից՝ 19 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2020թ. առաջին կիսամյակում կատարվել է 47 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: